ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

" 12 " ապրիլի 2011թ. № 35-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» (ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ «ՏԱԹԵՎԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ», «ՎԵՐԻՇԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ԵՎ «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ») ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 19.05.2005թ. «50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) ձևավորումը և գործունեությունը կանոնակարգելու մասին» N1187 որոշման և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության 50-տոկոս և ավելի պետական մասնակցությամբ փակ բաժնետիրական առողջապահական ընկերությունների վերստուգողների ընտրության մրցութային հանձնաժողովի 2011թ. ապրիլի 11-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 2 որոշումը և Կ. Մալինցյանի անձնական դիմումը, **կ ա ր գ ա դ ր ում եմ**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» (համատեղության կարգով «Տաթևի առողջության կենտրոն», «Վերիշենի բժշկական ամբուլատորիա» և «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան») փակ բաժնետիրական ընկերություններում 2011թվականի ապրիլի 13-ից վերստուգող նշանակել Կատարինե Մալինցյանին, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 3 տարի ժամկետով;

2.Աշխատանքի վարձատրությունը կատարել համաձայն սահմանված կարգի:

3.Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2011թ. ապրիլի 12
ք. Կապան